ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6. 1964 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», II, 1964,

ԳԱ հրատարակչություն, 380 էջ

Հայկական ՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորը, որ ընդամենը մի քանի տարվա պատմություն ունի, գիտական արդյունավետ գործունեություն է ծավալել և մեկը մյուսի ետևից ընթերցող հասարակայնության ուշադրությանն է ներկայացնում ոչ միայն առանձին մենագրություններ ու փոքրածավալ հետազոտություններ, այլ նաև գիտական հոդվածների ժողովածուներ։

Գրախոսվող «Ժողովածուն» թվով երկրորդն է, որ սեկտորը այժմ հանձնել է ընթերցողի դատին։ Սկզբից ևեթ նշենք, որ «Ժողովածուն» ուշագրավ է ոչ միայն Մերձավոր Արևելքի զանազան երկրներին վերաբերող հարցերի ընդգրկմամբ, այլ, որն ավելի կարևոր է, այդ հարցերի բազմապիսիությամբ, դրանց լուսաբանմամբ և մանավանդ փաստական հարուստ ու հետաքրքիր նյութերի բովանդակմամբ։

Եվ իրոք. եթե փորձենք «Ժողովածուում» զետեղված նյութերը բաժանել ըստ երկրների, ապա կունենանք հետևյալ ցուցակը՝ Թուրքիա, Իրան, Իրաք, Եգիպտոս, Սիրիա, Լիբանան։ Այստեղ ընթերցողը հանդիպում է հետաքրքիր նյութերի, որոնք առնչվում են այդ երկրների հասարակական-քաղաքական կյանքին։

«Ժողովածուն» բացվում է Ն. Հովհաննիսյանի «Իրաքի աշխատավորների 1952 թ. ելույթները և նրանց դերը Իրաքի ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ» հոդվածով։ Հեղինակն իր ուսումնասիրության հիմնական խնդիրը դարձնելով Իրաքի աշխատավորության 1952 թ. և հատկապես նոյեմբերյան ելույթները, դրանով իսկ փաստորեն անդրադարձել է դեռևս քիչ ուսումնասիրված արաբական ազգային-ազատագրական շարժումներին։

Հենվելով իրաքյան, անգլիական և ռուսական աղբյուրների վրա, Ն. Հովհաննիսյանը նախ հանգամանորեն վերլուծում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և ապա՝ լուսաբանում հենց այդ վիճակով պայմանավորված սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարը, որն իր գագաթնակետին է հասնում 1952 թ. նոյեմբերին, երբ բանվորական, ուսանողական և գյուղացիական ելույթները սրբում-տանում են Մուստաֆա ալ-Ումարի և Ջամիլ ալ-Մադֆայի կառավարությունները։ Հոդվածում հանգամանորեն, մարքսիստական մոտեցմամբ վերլուծված են 1952 թ. Իրաքում բորբոքված պայքարի սոցիալական հիմքն ու նպատակները, նրա հակաիմպերիալիստական բնույթը, ինչպես նաև 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագիրը վերացնելու պահանջը։ Արժեքավոր է նաև այն, որ հանդես չգալով էմպիրիկ շարադրողի դերում, Ն. Հովհաննիսյանը կարողացել է իր վերլուծությունները համեմել հարուստ նյութերով։

Չնայած ժողովրդական հզոր ելույթներին, Իրաքի կառավարող կլիկն ու արևմտյան իմպերիալիստները, կառավարության գլուխ կանգնեցնելով գեներալ Մուհամմեդ Նուրեդդինին, կարողացան պահպանել իրենց դիրքերը։ Նշելով հարցի այդ կողմը, հեղինակը միաժամանակ ցույց է տվել Իրաքի աշխատավորության 1952 թ. ելույթների պատմական նշանակությունը, այն, որ Իրաքի պատմության մեջ առաջին անգամ մտցվեց ուղղակի ընտրական սիստեմ։ Իրաքում և արաբական մյուս երկրներում ծավալված հակաիմպերիալիստական լայն շարժումների շնորհիվ իմպերիալիստները ստիպված եղան ժամանակավորապես հրաժարվել Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական բլոկ («Միջինարևելյան հրամանատարություն») ստեղծելու իրենց ագրեսիվ պլաններից։

Մյուս հարցը, որն առնչվում է Մերձավոր Արևելքի, այդ թվում արաբական երկրների ժամանակակից պատմությանը և որը տեղ է գտել «Ժողովածուում», դա «Նավթի արաբական կոնֆերանսները» վերտառությամբ հոդվածն է։ Հանրահայտ է, որ Մերձավոր Արևելքի երկրներում

ցարդ դեռևս շարունակում են պահպանել իրենց գոյությունը օտարերկրյա մոնոպոլիաները։ Համառոտակի նշելով արաբական մի շարք երկրների ձգտումները նավթային ինքնուրույն քաղաքականության հասնելու համար, հոդվածի հեղինակ Հ. Թուրյանցը լուսաբանում է նավթի արաբական կոնֆերանսները՝ իբրև օտարերկրյա մոնոպոլիաների դեմ արաբական ժողովուրդների մղած պայքարի կարևոր գործոններ։ Նա հանգամանորեն կանգ է առնում այդ հարցի շուրջը տեղի ունեցած կոնգրեսների, նավթի արաբական էքսպերտների Ջիդայի կոնֆերանսի, «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» երկու ժողովների վրա։ Հեղինակը իրավացիորեն եզրակացնում է, որ տեղական մի քանի նավթային ընկերությունների հանդեպ գալն ու իմպերիալիստների կողմից արաբներին արվող կցկտուր զիջումները ի վիճակի չեն վերացնելու իմպերիալիստական այն անողոք ճնշումը, որին ենթարկվում են Մերձավոր Արևելքի երկրների ժողովուրդները։

«Ժողովածուում» տեղ են գտել նաև արժեքավոր այլ հոդվածներ, որոնք ևս սերտորեն առնչվում են արաբական երկրների թուն պատմությանը։ Եվ դա պիտի համարել ներկա ժողովածուի առավելություններից մեկը։ Այդ իմաստով ուշագրավ է Շաքրոյն Մհոյի «Իրարում քրդական ազգային-ազատագրական շարժման նտպատերազմյան պատմությունից» հոդվածը, որտեղ ցույց է տրվում, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Միջին և Մերձավոր Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը նոր էտապ է ապրում, հերոսական պայքարի է բարձրանում նաև Իրաքի քուրդ աշխատավորությունը։ Հոդվածում շարադրված է այդ պայքարի համառոտ պատմությունը, ցույց է տրված նրա հակաիմպերիալիստական բնույթը և ընդգծված այն իրողությունը, որ այդ պայքարը Իրաքի ժողովրդի ազգային-ազատագրական շարժման բաղկացուցիչ մասն էր։

«Ժողովածուում» տպագրված բազմապիսի հոդվածները պայմանավորում են ոչ միայն թեմատիկայի հարստությունը, այլև պատմական տարբեր ժամանակաշրջաններ ընդգրկելու հանգամանքը։ Ժամանակակից թեմատիկայից բացի ժողովածուում զետեղված մի շարք հոդվածներում լուսաբանված են Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների հին ու միջնադարյան պատմության մի շարք ուշագրավ հարցեր։ Այսպես, Գ. Ակոպովը հանդես է եկել «Քրդերի առաջացման պրոբլեմի մի քանի ասպեկտները հին իրանական դիցաբանության լույսի տակ» գիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող հոդվածով։ Այդ հետաքրքրությունը ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ քրդերի առաջացման մասին պատմական տվյալները խիստ հազվադեպ են և կցկտուր։

Հենվելով դիցաբանական տվյալների վրա, Ակոպովը քննարկում է քրդերի առաջացման մասին Իբն-Քութայբիից, ալ-Մաս'ուդիից, Ֆիրդուսուց, ալ-Բիթլիսիից և ուրիշներից եկող այն վերսիան, թե քրդերը Զոհակ թագավորի համար զոհաբերվելուց խուսափած պատանիների սերունդներն են։ Նա ցույց է տալիս, որ Զոհակի մասին (զուտ ավեստայի ձևով) ավանդությունները քրդերի վերաբերյալ հիշատակումներ չեն անում, որ «Շահ-Նամեում» Ֆիրդուսին քրդերի առաջացման հարցը դրել է ոչ թե ազգագրական, այլ պատմական պլանով, այսինքն ոչ թե քրդերի որտեղից առաջանալու, այլ պատմական ինչպիսի պրոցեսների հետևանքով շրջապատից անջատվելու առումով, մի հանգամանք, որը լիակատար չափով համապատասխանել է իրանական տրադիցիային։ Նա «Ժողովուրդների դասակարգումը, նշում է Ակոպովը, կատարում է ոչ թե ըստ նրանց ռասա-էթնիկական ճանաչման, այլ ըստ նրանց տնտեսական ու սոցիալական առանձնահատկությունների» (349)։

Հոդվածում պարզաբանվում է, որ իրանական աղբյուրներում եղած «քուրդ» անվան տակ ենթադրվում է ոչ թե էթնիկական, այլ սոցիալական կատեգորիա՝ ռազմատենչ քոչվորանասնապահական ցեղերի ընդհանրություն։ Դիցաբանական տվյալները ցույց են տալիս, որ քրդերը շրջապատի բնակչությունից անջատվել են այն ժամանակ, երբ վերջինս սկսել է բաժանվել անասնապահների և հողագործների։ Նստակյաց իրանցիները ստեղծում են հողագործական կուլտուրայի զարգացման կրոն, այնինչ քրդերը մնում են քոչվորներ։ Նախնադարյան-համայնական կարգերի քայքայման և աշխատանքի բաժանման հետևանքով, եզրակացնում է հոդվածագիրը, ընդհանուր մասսայից սկսում է անջատվել ռազմիկ գորտերի, գորդերի, քրդերի դասը, որը դառնում է Քուրդիստանի ֆեոդալականացման պրոցեսի նշանակալից ուժը և «քուրդ» անվանումը փոխարինում իր ղեկավարությամբ ձևավորվող մի ամբողջ ժողովրդի վրա, որն սկզբում էթնիկական, լեզվական և նույնիսկ աշխարհագրական տեսակետից իրենից ներկայացնում էր իրար հետ ոչնչով չպայմանավորված ցեղեր։

Արաբական աշխարհին վերաբերող իր էջերում «Ժողովածուն» պատշաճ տեղ է հատկացրել հայ-արարական կապերին։ Դա անհրաժեշտ էր և ողջունելի։ Հայ-արարական կապերը լուսաբանություն են գտել Հ. Թոփուզյանի և Հ. Թուրշյանի հոդվածներում։ Հ. Թուրշյանն իր ուսումնասիրության համար նյութ է դարձրել հայ-եգիպտական կապերը XI—XII դդ.։ «XI—XII դդ. եգիպտահայ գաղութի պատմությունից» վերտառությամբ իր հոդվածում նա պատմում է հայ-արաբական այն նոր կապերի մասին, որոնք առաջանում են 1070 թ. Մանազկերտի տակ Բյուզանդիայի կրած պարտությունից հետո։ Հեղինակն, այնուհետև, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Կահիրեի, Ալեքսանդրիայի և եգիպտական այլ քաղաքների հայ գաղութների պատմությունից։

Հ. Թոփուզյանը իր «Հայ աշխատավորության մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժումներին 1947—1952 թթ.» հոդվածում հայկական, արաբական և ֆրանսիական աղբյուրների հիման վրա ցույց է տվել հայ և արար աշխատավորների համատեղ ելույթները Սիրիայում և Լիբանանում՝ ընդդեմ իմպերիալիզմի և ռեակցիայի, հանուն ազգային անկախության և դեմոկրատիայի։

«Ժողովածուին» ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նաև իրանագիտությամբ զբաղվողները։ Հ. Կիրակոսյանը, հենվելով գլխավորապես անգլերեն աղբյուրների ու հետազոտությունների վրա, «Իրանում անգլիական իմպերիալիստական քաղաքականության պատմությունից (1918—1921 թթ.)» վերտառությամբ իր հոդվածում մերկացնում է անգլիական ինտերվենցիան Իրանում (1918—1921 թթ.) իբրև իրանական ժողովրդի անկախության և պետական ինքնուրույնության կոպիտ ոտնահարում, որպես Իրանը բրիտանական գաղութ դարձնելու մի փորձ։ Փաստերի հանգամանորեն վերլուծմամբ և մեջբերմամբ հեղինակը նախ տալիս է անգլիական գաղութային միտումների ու մեքենայությունների պատմությունը Իրանում և ապա նշում բացահայտ գաղութային ռեժիմ հաստատելու անգլիական պլանների ձախողման պատճառները։ «Իրանի ժողովուրդների ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական պայքարը հանուն ազգային անկախության,—իրավացիորեն եզրափակում է իր հոդվածը Հ. Կիրակոսյանը,—միջազգային ասպարեզում Սովետական Ռուսաստանի հեղինակության և նշանակության աճը, սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում, ռևոլյուցիոն շարժումների ուժեղացումը Մերձավոր և Միջին Արևելքի մյուս երկրներում... և, վերջապես, Սովետա-իրանական պայմանագրի կնքումը պարտության մատնեցին Իրանում բացահայտ գաղութային տիրապետություն հաստատելու բրիտանական իմպերիալիստների պլանները» (էջ 172)։

Ահա թե ինչու, Անգլիան ստիպված էր շեղյալ հայտարարել 1919 թ. անգլո-իրանական պայմանագիրը և զորքերը դուրս բերել Իրանից, որը սակայն չէր նշանակում հրաժարվել Իրանի նկատմամբ ունեցած գաղութատիրական հավակնություններից։ Ելնելով պատմական իրողությունից, Անգլիան պարզապես փոխում է իր քաղաքական գործելակերպի մեթոդները և իրանական ռեակցիայի հավանությամբ երկրում պահպանում է տնտեսական ու քաղաքական ուժեղ դիրքեր։

Իրանի պատմության կարևոր հարցերից մեկին է նվիրված Հ. Եգանյանի «Իրանում վակֆային հողատիրության պատմությունից» հոդվածը։ Իր ուշադրությունը բևեռելով կոնկրետ մի հարցի վրա, հոդվածագիրը իրանական, անգլիական և ֆրանսիական նյութերի և հետազոտությունների հիման վրա քննարկում է վակֆային հողատիրության էվոլյուցիան՝ սկսած հատկապես Սաֆավիների դինաստիայի շրջանից, երբ վակֆային հողերը հսկայական չափերի հասան, ընդհուպ վակֆային հողատիրության ժամանակակից ձևերը։ Այդ էվոլյուցիային հեղինակը հետևում է բազմաբնույթ նյութի օգտագործմամբ և ցույց տալիս այն վերելքներն ու վայրէջքները, որ ունեցել է հողատիրության այդ ձևը Իրանում՝ միջնադարից մինչև մեր օրերը։ Այսպես, հոդվածում տրված է վակֆային հողերի հսկայական աճը սաֆավիների օրոք, վակֆային սիստեմի զարգացումը Նադիր-շահի ժամանակ, նրա հետագա աճը XIX դ. օտարերկրյա կապիտալի ներթափանցման հետևանքով հողատիրության այդ ձևի վերաճումը խոշոր մասնավոր հողատիրության կարևոր աղբյուրի, մի հանգամանք, որին մեծապես նպաստում են նաև Ռիզա-շահի միջոցառումները։

Եգանյանը տվել է վակֆային հողատիրության ինստիտուտի առաջացման պայմանները, նրա սկզբնական ձևերը և ապա հետագայում դրանց վերաճումն ու փոփոխումը։ Դա հեղինակին հնարավորություն է ընձեռել հանգելու այն ճիշտ եզրակացության, թե հողատիրության այդ ձևը աստիճանաբար կորցնում է իր սկզբնական բովանդակությունը և դառնում «գյուղացիության շահագործման քողարկված մի ձև»։ Վերջին եզրակացությունը ամրապնդված է

փաստական նյութի շարադրմամբ. կալվածատիրական հողերը վակֆ դարձնելու լայն տարածում գտած պրակտիկան սոսկ մի միջոց է եղել այդ հողերը իրենց նախկին տերերի ձեռքում պահելու համար, միջոց, որին դիմել է նաև շահ, իր կալվածքները դարձնելով վակֆ։ Դրանով գյուղացիության վիճակը ոչնչով չէր փոխվում։ Վակֆային հողերի վրա աշխատող գյուղացիները ենթարկվում էին նույնպիսի դաժան շահագործման և զրկանքների, ինչպես կալվածատիրական հողերի վրա աշխատողները։

Բ. Բալայանը հանդես է եկել «Միջազգային հարաբերությունները Արևելքում ռուս-իրանական պատերազմի նախօրյակին» հոդվածով։ Թեև այդ հարցը այս կամ այն խնդրի կապակցությամբ բավական լուսաբանված է պատմական (մանավանդ ռուսական) գրականության մեջ, սակայն հեղինակին հաջողվել է փաստական ծավալուն նյութի, մասնավորապես իրանական աղբյուրների, ընդգրկմամբ հատուկ քննարկման առարկա դարձնել այն, մեկնաբանել դիվանագիտական այն բարդ իրադրությունը, որ այդ շրջանում առաջացել էր Անդրկովկասում և Միջին Արևելքում։

Ինչպես ասացինք՝ իրանագիտական հարցերը չեն ամփոփված միայն պատմական խնդիրների լուսաբանմամբ. «Ժողովածուում» տեղ են գտել նաև գրականագիտական բնույթի երկու հոդվածներ։ Նրանցից մեկը, որի հեղինակն է Ա. Բուդաղյանը, լուսաբանում է ժամանակակից Իրանի խոշոր արձակագիր Սադեղ Հեդայաթի ռեալիզմը։ Մյուս հոդվածի հեղինակը Հ. Մովսիսյանն է, որ անդրադարձել է նոր հերոսի կերպարին հետպատերազմյան շրջանի իրանական գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Բոզորգ Ալավիի նովելներում։

Արաբագիտության, իրանագիտության և բրդագիտության հետ միասին Արևելագիտական սեկտորի գիտահետազոտական աշխատանքներում լուրջ տեղ է գրավում թուրքագիտությունը և մանավանդ Թուրքիայի ժամանակակից ու համեմատաբար ոչ հեռավոր անցյալի պատմության հարցերի ուսումնասիրությունը։ Այս հանգամանքը, բնականաբար, իր արտահայտությունն է գտել ներկա «Ժողովածուում»։

Թուրքիային նվիրված հոդվածները հիմնականում ընդգրկում են առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած շրջանը։ Բացառություն են կազմում Ա. Սաֆրաստյանի և Հ. Ինճիկյանի հոդվածները։ Վերջին հեղինակի պատմա-տեսական բնույթի հոդվածին կանդրադառնանք առանձին, իսկ Ա. Սաֆրաստյանի «XVII դ. թուրքական գիտական մտքի ներկայացուցիչներ Քյաթիբ Չելեբին և Էվլիա Չելեբին» հոդվածի վրա հարկ ենք համարում մի փոքր կանգ առնել հենց այստեղ։

Ա. Սաֆրաստյանը, որ մեր գիտական հասարակայնությանը հայտնի է որպես թուրքական ալբյուրներին ու գրականությանը բաշատեղյակ մի հեղինակ, այս հոդվածում ևս չի դավաճանել իր կոչմանը։ Նա հանգամանորեն բնութագրել է XVII դ. թուրք պատմագրության և աշխարհագրության ականավոր ներկայացուցիչներ Քյաթիբ և Էվլիա Չելեբիներին։ Առաջինը իր բազմաթիվ աշխատություններում լուսաբանել է Օսմանյան կայսրության մեջ XVI—XVII դարերին տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, երկրորդը՝ Էվլիա Չելեբին, լինելով պատմագետ և աշխարհագետ և ճանապարհորդելով բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ Բալկաններ, Կովկաս, Հայաստան, Միջագետք ու Եգիպտոս, իր տասհատորանոց գրքում արժեքավոր շատ տեղեկություններ է հաղորդել այդ երկրների սոցիալ-տնտեսական կյանքից։ Ա. Սաֆրաստյանը ցույց է տալիս, որ այդ երկու հեղինակների աշխատություններում էլ հարուստ նյութեր ու տեղեկություններ են զետեղված Հայաստանի աշխարհագրության և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ։

«Ժողովածուին» մասնակցում է մոսկվացի գիտնական, Թուրքիայի ժամանակակից պատմության լավագույն մասնագետներից մեկը՝ Ե. Լուդշուվեյտը իր «Թուրքական ձախ սոցիալիստների կոնֆերենցիան Մոսկվայում 1918 թ. ամռանը» վերնագիրը կրող հոդվածով։ Հեղինակը հանգամանորեն պատմում է, որ Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան իր բարերար ազդեցությամբ ռևոլյուցիոն գիտակցության և կազմակերպվածության կոչեց նաև Ռուսաստանում գտնվող թուրքական ռազմագերիներին և առհասարակ թուրք բնակչությանը։ Այս առիթով նա բավական ծավալուն շարադրանք է նվիրել «Ենի Դյունյա» («Նոր աշխարհ») թերթին, որ 1918 թ. ապրիլից սկսում են հրատարակել Մուստաֆա Սուրխին և Ռուսաստանի մահմեդականների գործերի կոմիսարիատին կից գործող նրա խմբի անդամները։

Այնուհետև հեղինակը հանգամանորեն կանգ է առնում բուն կոնֆերենցիայի քննարկած հարցերի վրա, նշում այդ հարցերի հեղափոխական բնույթն ու կոնֆերենցիայի նշանակությունը հետագա հեղափոխական շարժման ծավալման համար Թուրքիայում։ Կոնֆերենցիան որոշեց ստեղծել թուրքական կոմունիստական կազմակերպության կենտրոնական կոմիտե։ Հեղինակը

նշում է, որ թեև այդ կազմակերպությունը կտրված էր Թուրքիայից, սակայն այն զգալի դեր խաղաց Թուրքիայի կոմունիստական կուսակցության ստեղծման գործում, որը ծնունդ առավ 1920 թ. արդեն բուն Թուրքիայում։

Դիտական նշանակալից ակտուալություն և հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Սահակյանի «1920—1923 թթ. սովետա-թուրքական հարաբերությունների մի քանի հարցերը ժամանակակից թուրք հեղինակների աշխատություններում» հոդվածը։

Նշելով, որ հետպատերազմյան շրջանում թուրք պատմաբանների աշխատություններում, թուրքական ռեսպուբլիկայի պատմության դասագրքերում և քաղաքական գործիչների ու ժուռնալիստների մեմուարներում կարևոր տեղ է հատկացվում թուրք-սովետական հարաբերությունների սկզբնական շրջանի (1920—1923 թթ.) հարցերին, Սահակյանը ցույց է տվել, որ թուրք հեղինակները՝ Քեմալ Քարիաթը, Ալի Ֆուադ Ջեբեսոյը, Թահսին Յունալը, Էնվեր զիա Կարալը, Ալթեմուր Քըլըջը, Մյուքերեմ Քյամիլ Սուն, Քյամիլ Սուն և ուրիշներ, այդ հարցերը լուսաբանում են կեղծարարության դիրքերից, միտումնավոր և միակողմանի ձևով, հավակնոտ ու տենդենցիոզ ոճով։ Հրատարակված փաստաթղթերի և արխիվային նյութերի հիման վրա Սահակյանը մերկացնում է թուրք հեղինակների կողմից պատմական իրողության բացահայտ կեղծումը, մանավանդ նրանց այն միտումը, որի նպատակն է ժխտել Սովետական Ռուսաստանի օգնության կարևոր նշանակությունը թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հաղթանակի գործում, այդ օգնության անշահախնդիր բնույթը։ Սահակյանի մտքերն ավելի համոզիչ են դառնում նաև այն պատճառով, որ նա հաճախ դիմում է նաև ժամանակակից թուրք գործիչների և թուրքական մամուլի անկեղծ խոստովանություններին։

Ինչպես մյուս բաժինների, Թուրքիային վերաբերող հարցերը նույնպես բավական բազմազան են։ Այս առումով ուշագրավ են նաև Ռ. Դանիելյանի և Ռ. Կոնդակչյանի հոդվածները։ Հիմնականում թուրքական մամուլից վերցված կոնկրետ ավյալների հիման վրա Դանիելյանը լուսաբանում է տարրական և միջնակարգ կրթության վիճակը ժամանակակից Թուրքիայում, ցույց տալիս, որ կրթության ողորմելի դրությունը թուրքական կառավարող շրջանների հակաժողովրդական քաղաքականության հետևանքն է, շրջաններ, որոնք երկիրը ներքաշել են Հյուսիսատլանտյան ագրեսիվ բլոկի մեջ։ Դանիելյանի բերած փաստերն ու փաստարկումները տպավորիչ են և համոզեցուցիչ։

Ռ. Կոնդակչյանը իր հոդվածում քննարկում է միջկուսակցական պայքարի հարցը հետպատերազմյան Թուրքիայում և ապա դեմոկրատական կուսակցության անցումը իշխանության գլուխ։ Այս առիթով նա անդրադարձել է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ Թուրքիայի ներքաղաքական դրությունը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ժողովրդա-դեմոկրատական կուսակցության արտաքին ու ներքին քաղաքականության ճգնաժամը, նրա ներսում օպոզիցիայի առաջացումը, դեմոկրատական կուսակցության ստեղծումը և նրա անցումը իշխանության գլուխ։

Գրախոսվող «Ժողովածուում» ընթերցողը կհանդիպի տեսական բնույթի երկու հոդվածի։ Դրանցից մեկի հեղինակը Հ. Ինճիկյանն է, որն հանդես է եկել «Երիտասարդ Թուրքերի շարժման գնահատականի շուրջը» բավական ինքնատիպ և արժեքավոր հոդվածով։ Ինքնատիպ ենք ասում նկատի ունենալով այն, որ հեղինակը չի զբաղվել (ինչպես այդ հաճախ կատարում են) առհասարակ հարցի մասին հայտնի կարծիքների շուրջը դատողություններ անելով, այլ իր ուսումնասիրության մեկնակետը կենտրոնացրել է կոնկրետ մեկ խնդրի՝ ականավոր բոլշևիկ Բոգդան Կնունյանցի կողմից Երիտասարդ Թուրքերի հեղափոխությանը տված գնահատականի վրա և այդ առիթով հարցը քննարկել է իր ամբողջ կապակցության մեջ։

Նշելով, որ Բ. Կնունյանցը զբաղվել է նաև ազգային-գաղութային քաղաքականության հարցերով, Ինճիկյանը հիմնական շեշտը դնում է Կնունյանցի 1909 թ. գրված «Թուրքիայում տեղի ունեցած դեպքերի շուրջը» հոդվածի վրա։ Այստեղ դրվատելով երիտթուրքերի հեղափոխությունը, Կնունյանցը միաժամանակ խիստ քննադատել է նրանց անհետևողականությունը։ Հեղինակը կարևոր ուշադրություն է դարձնում Կնունյանցի այն կարծիքին, ըստ որի արդուլ-համիդյան կարգերի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները հեղափոխության հիմնական ուժերից մեկն էին, իսկ ազգային հարցը, որին երիտթուրքերը յուրովի «լուծում» տվեցին, հանդիսանում էր հիմնական հարցերից մեկը։ Վերոհիշյալ տեսակետի առնչությամբ Ինճիկյանը իրավացի կերպով քննադատում է արևելագիտական գրականության մեջ գոյություն ունեցող այն թյուր մտայնությունը, ըստ որի ժխտվում է Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների դերը երկրի տնտեսական և մշակութային կյանքում, նրանց մասնակցու-

թյուններ այդ հեղափոխությանը, ինչպես նաև այն գերագնահատումը, որ հաճախ արվում է երիտթուրքերի և առհասարակ Թուրքիայում տեղի ունեցած հետագա շարժումներին՝ դրանց Արևելքի երկրների համար օրինակ դառնալու և մահմեդական երկրների ազատագրական շարժումների առաջատար ուժը համարելու տեսանկյունից։ Նա գտնում է, որ այդօրինակ գերագնահատումը թուրքական բուրժուազիային տրվող ոչ-ճիշտ գնահատականի հետևանքն է, բուրժուազիա, որը պահպանեց ֆեոդալական և նույնիսկ նախաֆեոդալական հարաբերությունները։

Տեսական մյուս հոդվածի հեղինակը Տ. Հակոբյանն է։ Նրա հոդվածը կրում է «Ուշ-ֆեոդալիզմի դարաշրջանում (XVII—XVIII դդ.) Արևելքի երկրների զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին» վերնագիրը։ Ելնելով հասարակական-տնտեսական կացութաձևերի մասին մարքսիստական ուսմունքից և Արևելքի երկրների պատմության վերաբերյալ Մարքսի և Էնգելսի ասույթներից, Տ. Հակոբյանը քննարկում է խնդրո առարկա պրոբլեմը, հանգամանորեն կանգ առնելով այդ երկրների զարգացման մի քանի առանձնահատկությունների վրա ուշ-ֆեոդալիզմի շրջանում։ Հեղինակը մասնավորապես լուրջ ուշադրություն է դարձրել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ Արևելքի երկրներում համայնքի համեմատաբար երկարատև գոյությունը, քոչվոր ցեղերի մոտ տոհմացեղային նահապետական հարաբերությունների պահպանումը (Իրան, Աֆղանստան, Հնդկաստան, Արաբական երկրներ), փոխհարաբերությունները նստակյաց բնակչության հետ, հողագործական կուլտուրայի հետամնաց ձևերի առկայությունը, գյուղացիության ճնշումը, քաղաքում բուրժուական հարաբերությունների թույլ զարգացումը և այլն։

Հակոբյանի հոդվածի մյուս արժանիքն էլ այն է, որ Իրանի, Հնդկաստանի և Աֆղանստանի օրինակներով ցույց է տրված նոր ժամանակաշրջանում Արևելքի երկրների զարգացումը արգելակող հիմնական գործոնի՝ իմպերիալիստական երկրների գաղութային քաղաքականությունը, նա փաստական նյութի միջոցով մերկացրել է այդ քաղաքականության հակաժողովրդական, գաղութարարական ու թալանչիական բնույթը։

Որպես արժեքավոր ու դրական կողմ պիտի նշել նաև այն, որ «Ժողովածուին» մասնակցող գրեթե բոլոր հեղինակները օգտվել են եվրոպական և արևելյան լեզուներից։

Ընդհանուր առմամբ լավ խմբագրված այս «Ժողովածուում», սակայն, տեղ են գտել լեզվաոճական և խմբագրական բնույթի վրիպումներ։

Բերենք միայն մի օրինակ։ Ուշադիր ընթերցողին, օրինակ, կթվա, թե խմբագրական կոլեգիան կարծես չի կարողացել ճշտել հեղինակ Շարբոյի Մհոյի անուն ու ազգանունը։ Իր հոդվածը նա ստորագրել է երեք տարբեր անուններով. բուն տեքստում՝ Շարբոյ Մհո (էջ 24), հայերեն «բովանդակության» մեջ՝ Շ. Խ. Մհոյան, իսկ ռուսերեն «Содержание»-ի մեջ՝ Ш. Худо (Мгоян).

Մնում է ցանկալի, որ սեկտորը շարունակի արդեն կարծես թե տրադիցիա դարձած հոդվածների ժողովածուներ հրատարակելու իր այս նախաձեռնությունը, որովհետև դա անհրաժեշտ է մեր ընթերցողի համար և միաժամանակ նպաստում է սեկտորի գիտահետազոտական պլանների բարձրորակ կատարման գործին։

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ